

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ
ՓԱՓԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ԾՔԱՆԾԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ,
(ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ


ԼԻՈՆ

Մենք կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի պա-
լականերու մէջ կը գտնուին ազնուահոգի անձնատրութիւններ, որոնք իրենց
բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առաւել
ջէն ու պայծառ դառնայ մեր Եկեղեցւոյ պատմական կեդրոն Սուրբ Էջմիա-
ծիւնը:

Դուք, յարգարժան Տիար, իբրև մէկ ազնիւ պալակը մեր հաւատաւոր աշ-
գին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Եղիշէ Փափապեանի անթառամ յի-
շատակը, Ձեր սրտաբոյս նուիրատութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս պա-
ծառութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը:

Այսու գնահատելով Ձեր սրտագին նուէրը, այլև սիրով ընդառաջելով միջ-
նորդութեանը Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի
հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի, Մեր
սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» շքանշանը, որ
վայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար, արե-
ւոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան եր-
ջանկութեամբ, որպէս մշտայուղ նշան անմոռաց սիրոյ առ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին:

«Ողջ լերուք պօրացեալ Սուրբ Հոգւով և յաւետ օրինեալ ի Տեառնէ և ի
Մէնջ». ամէն:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնդակս ի 11 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1103